# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացված Կ-228-19.07.2019-ՏՏԳԲ-011/0 «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և Կ-228[1]-19.07.2019-ՏՏԳԲ-011/0 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

| ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ | ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ | ԱՌԱՋԱՐԿԸ | ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ | ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ |
|---|---|---|---|---|
| ՀՀ կառավարության առաջարկտ «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծի վերաբերյալ | ***Հոդված 3.*** Օրենսգրքի 114-րդ հոդվածի առաջին մասի 10-րդ կետը «հանգստի» բառից հետո լրացնել «, ռեկրեացիայի» բառով: | ***Հոդված*** 3. Օրենսգրքի 114-րդ հոդվածի առաջին մասի 10-րդ կետում «հանգստի» բառը փոխարինել «ռեկրեացիայի» բառով: | Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: | Ընդունվել է: |
| ՀՀ կառավարության առաջարկը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու | ***Հոդված 1.*** Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 63.6-րդ հոդվածում վերնագիրը և տեքստը «Հանգստի» բառից հետո լրացնել «, ռեկրեացիայի» բառով: | նախագծի 3-րդ հոդվածի փոփոխությամբ ներկայացված «հանգստի» բառը փոխարինել «ռեկրեացիայի» բառով, քանի որ նախագծով ներկայացված «ռեկրեացիա» հասկացության մեջ ներառված է նաև հանգիստը: Համապատասխան փոփոխություն կատարել նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության | Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: | Ընդունվել է: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| մասին» ՀՀ օրենքների նախագծի վերաբերյալ | | օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում: Փոփոխություն կատարել նաև վերոնշյալ օրենքների նախագծերի վերնագրերում: | | |